Լ. Միրիջանյանի անվան հ. 155 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնական գործընթացում կիրառվող ուսուցման մեթոդներ և համապատասխան դասի պլանավորում

Ուսուցիչ՝ Մելոյան Գոհար

Ղեկավար՝ Միրզոյան Թամարա

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

ԳԼՈՒԽ 1. Տարրական դասարաններում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատելու առանձնահատկությունները և կիրառվող ուսուցման մեթոդները---------- 5

ԳԼՈՒԽ 2. Ուսուցչի կողմից դասի ճիշտ պլանավորումը ԿԱՊԿՈՒ աշակերտներին դասավանդելիս----------10

Եզրակացություն---------- 13

Օգտագործված գրականության ցանկ---------- 15

Ներածություն

Ներկայումս հայկական իրականության մեջ բավականին դժվար են ընդունում և ուշադրության դարձնում ԿԱՊԿՈՒ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) երեխաներին: Իհարկե, դպրոցներում ներառական կրթությանը վերջին շրջանում ավելի շատ ուշադրություն է դարձվում և դա հնարավորություն է տալիս ԿԱՊԿՈՒ երեխաներին ավելի հեշտ ինտեգրվել շրջապատին և լիարժեք կյանքով ապրել: Առավել կարևոր է ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքը հատկապես տարրական դասարաններում, քանզի հենց այդ տարիքից է ձևավորվում մարդու գիտակցական մտածողությունը և հենց այդ ժամանակ էլ երեխաներն ավելի հեշտ են սովորում ու հետագայում կիրառում իրենց ստացած գիտելիքները:

Ուսումնասիրության առարկան և նպատակը: Մեր հետազոտական աշխատանքի առարկան է ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնական գործընթացում կիրառվող ուսուցման մեթոդները և համապատասխան դասի պլանավորումը: Նպատակն է՝ ցույց տալ այն մեթոդները, որոնք պետք է ուսուցիչը կիրառի ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատելիս և դասն այնպես պլանավորի, որ տվյալ աշակերտներն էլ իրենց մնացած դասընկերների հետ լիարժեք ներգրավվեն դասապրոցեսի մեջ:

Հետազոտության խնդիրները: Վեր հանել այն խնդիրները, որոնք առաջանում են ԿԱՊԿՈՒ սովորողներին դասավանդելիս և մատնանշել այն մեթոդները, որոնք կօգնեն դասը ճիշտ պլանավորել:

Արդիականությունը: Դպրոցներում ներկայումս հաճախ հանդիպող խնդիրներից մեկն այն է, որ ոչ բոլոր աշակերտներն են ընդունում իրենց հետ սովորող ԿԱՊԿՈՒ աշակերտներին: Դասավանդող ուսուցիչը պետք է իր ճիշտ աշխատանքի շնորհիվ կարողանա այնպիսի մթնոլորտ ձևավորել, որ նման խնդիրներ ունեցող երեխաները դեռ տարրական դասարաններից կարողանան իրենց տվյալ դասարանի լիարժեք մասնիկը զգալ և հասկանալ այն, որ իրենք ոչնչով չեն տարբերվում դասարանի մյուս աշակերտներից: Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ այս թեման շարունակում է արդիական մնալ: Ընտրել ենք հենց այս թեման,

որպեսզի և՛ս մեկ անգամ ցույց տանք այն խնդիրներն ու դժվարությունները, որոնց հանդիպում են թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները: Ցանկանում ենք կրկին ուշադրություն հրավիրել այս թեմայի վրա և փորձել այնպես անել, որ տարեցտարի վերը նշված խնդիրները ստանան իրենց ճիշտ լուծումները:

Մեր հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. Տարրական դասարաններում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատելու առանձնահատկությունները և կիրառվող ուսուցման մեթոդները

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձանց համար: ԿԱՊԿՈՒ է համարվում այն անձը, ով ունի ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

ԿԱՊԿՈՒ անձանց կրթության նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան և առողջությանը համարժեք ուսումնական միջավայրում նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովումն է [1] : Այն ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

ԿԱՊԿՈՒ անձանց համար առավել բարդ է դպրոց մուտք գործելու ժամանակահատվածը, քանզի հենց դպրոցից է սկսվում մարդու

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166

ձևավորումն ու զարգացումը: Դպրոցում մասնավորապես կարևորվում է ուսուցչի դերը, նրա հոգեբանական պատրաստվածությունը և տարբեր բնավորությունների տեր աշակերտների հետ աշխատելու կարողությունը, իսկ այդ ամենը դրսևորվում է հենց տարրական դասարանների հետ աշխատելիս: Դպրոցում ուսուցիչը պետք է առավել ուշադրություն դարձնի այն երեխաներին, որոնք ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, նրանց հետ պետք է աշխատի բարեխղճորեն, պետք է հնարավորինս ներգրավի դասապրոցեսի մեջ և այնպիսի պայմաններ ստեղծի, որ տվյալ երեխան իրեն դասարանի լիարժեք մասնիկը զգա: ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը կազմակերպվում է հիմնական-առարկայական ուսուցիչների կողմից՝ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ համատեղ ուսուցման միջոցով: Ներառական կրթության համակարգը ենթադրում է առարկայական ուսուցիչների և բազմամասնագիտական թիմի միջև ակտիվ համագործակցություն՝ ԿԱՊԿՈՒ երեխաների համար դասավանդման մեթոդների, մոտեցումների և անհատական ծրագրերի մշակման հարցերում[2]:

Մանկավարժական որևէ մեթոդ կամ տեխնոլոգիա ընտրելիս ուսուցիչը նախ և առաջ պետք է հաշվի առնի իր աշակերտների առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, ունակությունների մակարդակը, քանի որ յուրաքանչյուր երեխա եզակի է բնավորությամբ, հետաքրքրություններով, ընդունակություններով և ունի կրթական տարբեր խնդիրներ:

Կարևոր է ուսուցչի պատրաստակամության չորս հիմնական բաղադրիչ՝ . իմանա երեխայի անհատական առանձնահատկությունները,

. ընդունի այդ երեխային այնպիսին, ինչպիսին կա,

. կարողանա շփվել երեխայի հետ և ստեղծել իր հասակակից երեխաների հետ շփման ուղիներ,

. կարողանա ծնողների հետ ճիշտ աշխատել:

[2] //www.moj.am/storage/uploads/00.Ardir_8.pdf

ԿԱՊԿՈՒ աշակերտի ուսուցման կազմակերպման ժամանակ ուսուցիչը կարող է օգտագործել մի շարք մեթոդներ, հնարներ և միջոցներ: Պետք է ընտրել այնպիսի մեթոդներ, որոնք հասկանալի կլինեն ԿԱՊԿՈՒ սովորողների համար, ինչպես նաև դասպրոցեսից դուրս չեն թողնի դասարանի մնացած աշակերտներին: Իհարկե, կարևոր է դասարանում համագործակցային միջավայրի ստեղծումը:. Փոխօգնության սկզբունքի վրա հենված խմբային ուսուցման մեթոդների ճիշտ և նպատակային գործադրումը հնարավորություն է ընձեռում ապահովել ոչ միայն համագործակցային ուսումնական միջավայր, այլև բարձրացնում է մատուցվող ուսումնական նյութի ընկալման մակարդակը, աշակերտների միջև ձևավորում է գործնական-ուսումնական և ընկերային հարաբերություններ, աշակերտները ճիշտ են գնահատում ոչ միայն սեփական կարողություններն ու արժանիքները, այլև համադասարանցիներինը: Համագործակցային մեթոդը հատկապես շատ է կիրառվում այն դասարանների դեպքում, որտեղ սովորում են ԿԱՊԿՈՒ երեխաներ, նրանց հնարավորություն է տրվում շփման մեջ մտնել համադասարանցիների հետ, կարողանալ իրենց տրված առաջադրանքը խմբային աշխատանքի միջոցով և համադասարանցիների օգնությամբ կատարել: Խմբային աշխատանքի դեպքում նրանք կարողանում են ավելի շատ շփվել իրենց դասարանի աշակերտների հետ, ավելի խորն է արտահայտվում համագործակցության մեթոդը, որը հատկապես ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելիս ամենաարդյունավետ մեթոդներից մեկն է համարվում:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները.

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը:

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարներն ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել[3]:

Ուսուցիչը կարող է օգտագործել նաև անհատական մեթոդը, որի պարագայում պետք է համագործակցի նաև իր գործընկերների և ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների հետ: Մանկավարժն իր աշխատանքը պետք է սկսի ծնողների հետ զրույցից, ընտանիքի ուսումնասիրությունից: Սա կօգնի նախքան ԿԱՊԿՈՒ սովորողի հետ աշխատելը, ծանոթանալ նրա բնավորությանը, բացահայտել տվյալ աշակերտի ընդունակությունները և փորձել անհատական մեթոդի միջոցով դրանք զարգացնել: Անհատական մեթոդի ժամանակ ուսուցիչը կարող է օրինակ աուդիոտեքստեր տալ, որոնք լսելով ԿԱՊԿՈՒ սովորողը պետք է փորձի պատմել և ներկայացնել այն, ինչը հասկացել է: Կարելի է սկսել հենց հնչյուններից, օրինակ՝ տեքստում առկա լինեն այնպիսի հնչյուններ, որոնք տվյալ աշակերտը դժվարությամբ է արտաբերում:

Կարևոր է զարգացնել նաև ԿԱՊԿՈՒ աշակերտի միտքն ու երևակայությունը: Օրինակ՝ հանձնարարել նրան նկարել այն, ինչն իր պատկերացմամբ ամենագեղեցիկն է: Այս մեթոդի միջոցով կարելի է հասկանալ աշակերտի մտածողությունն ու պատկերացումներն աշխարհի մասին:

Իհարկե, տարրական դասարաններում ավելի բարդ է աշխատել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ, բայց յուրաքանչյուր ուսուցիչ պետք է շատ պատասխանատվորեն վերաբերվի իր մասնագիտությանն ու կարողանա այնպիսի պայմաններ ստեղծել, որ նման խնդիրներ ունեցող երեխաներն իրենց հետագա կյանքում հեշտությամբ հաղթահարեն դժվարությունները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ճիշտ կրթություն տալն օգնում է նրանց դուրս գալու ստվերից, սեփական տեսակետն արտահայտելիս լինելու ավելի ինքնավստահ, կառուցելու

[3] Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020 թ, 21 էջ

սեփական ապագան և դառնալու հասարակության լիիրավ անդամ[4]: Սրանից զատ պետք է փաստել, որ դպրոցից բացի շատ կարևոր է նաև ընտանիքի ու հասարակության դերը: Նրանք էլ իրենց հերթին չպետք է խոչընդոտեն ուսուցչի աշխատանքին, ընդհակառակը՝ պետք է օգնեն, որ այդ աշակերտները հասարակության մեջ իրենց օտար չզգան և ապրեն այնպես, ինչպես իրենց կողքին ապրող յուրաքանչյուր մարդ: Հասարակության մեջ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը պետք է փոխվի և դա էլ իր հերթին ավելի կնպաստի ԿԱՊԿՈՒ անձանց կյանքին ավելի հեշտ ինտեգրվելու հարցում[5]:

[4] Թադևոսյան Ս, Անհատական ուսուցման պլանի մշակման մեթոդական-ուղեցույց ձեռնարկ, 2016թ, 136 էջ

[5] Մնացականյան Ն. Ս, Ներառական դասարաններում սովորող երեխաների հիմնախնդրի ըմբռնումը և լուծումը, ուղեցույց ուսուցիչների համար, Երևան, 2009թ, էջ 87

ԳԼՈՒԽ 2. Ուսուցչի կողմից դասի ճիշտ պլանավորումը ԿԱՊԿՈՒ աշակերտներին դասավանդելիս

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Սա հատկապես կարևոր և կիրառելի մեթոդ է տարրական դասարաններում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելիս: Նախքան դասարան մտնելն ուսուցիչը պետք է պլանավորած լինի տվյալ օրվա դասը, դա կօգնի ավելի արդյունավետ անցկացնել դասաժամը:

Շեշտը պետք է դրվի երեխայի ուժեղ կողմերը զարգացնելու, իսկ թույլ կողմերն ուժեղացնելու վրա: Պետք է դասարանում այնպիսի մթնոլորտ ստեղծվի, որ դասարանի մնացած աշակերտները գիտակցեն, որ ԿԱՊԿՈՒ երեխան ոչ թե ունի «ֆիզիկական ու մտավոր արատներ», այլ տարբեր պատճառներով ունի դժվարություններ՝ կրթությանը լիարժեք մասնակցելու համար[6]:

Դասաժամն համարվում է ստացված, երբ ուսուցիչը կարողանում է ճիշտ կազմակերպել ԿԱՊԿՈՒ սովորողների և դասարանի մնացած աշակերտների հետ աշխատանքը, առաջադրանքներ տալ և կարողանալ դրանց միջոցով դասաժամ առ դասաժամ ավելի ինքնավստահ և համարձակ դարձնել ԿԱՊԿՈՒ աշակերտներին: Դպրոցում մենք ոչ միայն

[6] Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017թ, 23էջ

գիտելիք ենք փոխանցում, այլև երեխային սովորեցնում ենք ճիշտ վերաբերվել իրեն, ուրիշներին և աշխարհին:

Ամեն դասաժամ պետք է ունենա սկիզբ, զարգացում և ավարտ և յուրաքանչյուր դասաժամի պետք է նոր հետաքրքիր մեթոդ կիրառել, որն էլ դասն ավելի արդյունավետ կդարձնի:

Դասի անցկացման օրինակ. ուսուցիչը զրույցի մեթոդով սկսում է դասաժամը, խոսում աշակերտների հետ իրենց նախորդ օրվա մասին, խնդրում նրանց ներկայացնել այն դժվարությունները, որոնց հանդիպել են տնային հանձնարարությունները կատարելիս: Փորձում է հարցեր ուղղել նաև ԿԱՊԿՈՒ սովորողներին, այնուհետև ուսուցիչը դասարանի աշակերտներին բաժանում է խմբերի և խմբի առաջնորդ նշանակելով ԿԱՊԿՈՒ սովորողներին նրանց բաժանում է գունավոր թղթեր և հանձնարարում դրանք դասկարգել ըստ գույների: Երբ խմբերն ավարտում են հանձնարարությունը, խմբի առաջնորդները ներկայացնում են յուրաքնչյուր գույնի խորհրդանիշը՝ ըստ խմբի պատկերացման: Այս դասաժամի ընթացքում հնարավորություն է տրվում ԿԱՊԿՈՒ աշակերտներին ավելի համարձակ լինելու, սեփական մտքերն արտահայտելու և իրեն մնացած աշակերտներին հավասար համարելու: Խմբային աշխատանքից հետո ուսուցիչը գնահատում է աշակերտների աշխատանքը, տվյալ գունավոր թղթերին պատկերներ է նկարում և տալիս խմբերի առաջնորդներին: Դասի ավարտին հանձնարարում է նախորդ դասի կրկնություն և աշակերտներից հարցնելով տվյալ դասաժամի արդյունավետության մասին նրանց հրաժեշտ է տալիս:

Իհարկե, բազում նման օրինակներ կարելի է ներկայացնել: Յուրաքանչյուր ուսուցիչ ինքը պետք է առանձնացնի այն մեթոդները, որոնք կօգնեն դասն ավելի հետաքրքիր ու հասկանալի դարձնել դասարանի աշակերտների, մասնավորապես՝ ԿԱՊԿՈՒ սովորողների համար:

Դասերը պլանավորելիս ուսուցիչը կարող է համագործակցել նաև իր մնացյալ գործընկերների հետ, քանզի փորձի փոխանակումը միայն կնպաստի հագեցած ու բովանադակալի դասաժամ անցկացնելու համար:

Ընդունելի տարբերակ է նաև իրենց հասակակիցների հետ մրցույթների անցկացումը: Նման մրցույթների ընթացքում ԿԱՊԿՈՒ

աշակերտներին հնարավորություն է տրվում ավելի լավ դրսևորելու իրենց ստացած գիտելիքները, ավելի համարձակ լինել և հավատալ սեփական ուժերին: Ուստի մրցույթների անցկացումն էլ պետք է կազմի դասապրոցեսի մաս և ուսուցիչների ուշադրության կենտրոնում լինի:

Ուսուցիչը կարող է նաև աշակերտներից հետաքրքրվել իրենց պատկերացրած թեմաների մասին, նրանց հնարավորություն տա սեփական կարծիքն արտահայտել և նաև դրանք հաշվի առնելով անցկացնի դասը: Շատ կարևոր է նաև այն փաստը, որ ուսուցիչը կարողանա ընդունել թեկուզ այն փոքր սխալները, որոնք անում են ԿԱՊԿՈՒ սովորողները, պետք չէ նրանց ամբողջ դասարանի ներկայությամբ նկատողություն անել, քանի որ նման երեխաներն ավելի զգայուն են և հնարավոր նույնիսկ փոքր նկատողությունը նրանց համար սթրեսային կարող է լինել: Հենց այս ժամանակ է կարևորվում ուսուցչի հոգեբանական պատրաստվածության մակարդակը: Օրինակ, երբ ուսուցիչը նկատում է, որ ԿԱՊԿՈՒ աշակերտը սխալ է թույլ տալիս, կարող է նրան դասաժամից հետո առանձին մոտենալ և նրբանկատորեն բացատրել: Երբ ԿԱՊԿՈՒ աշակերտը զգում է, որ ինքը մասնակցում է դասպրոցեսին, կարողանում է իր կարծիքն արտահայտել և որ դա կարևորվում է և՛ դասընկերների, և՛ ուսուցչի կողմից, արդեն իրեն ավելի վստահ է զգում և համարում է դասարանի լիիրավ անդամ:

Իհարկե, ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելը բարդ է, քանզի նրանց մեծ մասն ագրեսիվ վարքագիծ ունի և շատ դժվար է միջավայրին հարմարվում, այստեղ ուսուցչի դերն առաջնային է դառնում: Մանկավարժական հոգեբանությունը նման դեպքերում գալիս է օգնության, խոսքով, զրույցի և հաղորդակցման մեթոդով նա փորձում է այնպես անել, որ ԿԱՊԿՈՒ սովորողը շուտ հարմարվի իր նոր միջավայրին և ամեն դասի ավելի շատ ներգրավվի դասապրոցեսի մեջ: Վերը նշվածը հենց պետք է կիրառելի լինի տարրական դասարաններում, քանզի եթե դեռ տարրական դասարանից աշակերտն իմանա ճիշտ վարքի կանոնները, կարողանա հեշտ շփվել իր հասակակիցների հետ և հարմարվել ցանկացած նոր միջավայրի, ուստի իր ողջ հետագա կյանքում կկարողանա հաղթահարել իր առջև ծառացած խնդիրներն ու հաղթահարել կյանքի դժվարությունները:

Դպրոցի ու ուսուցչի դերը ինչպես նախկինում, այնպես էլ այժմ շարունակում է առաջնային մնալ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելիս, հենց դպրոց-ընտանիք համագործակցության միջոցով են այդ երեխաները հետագայում դառնում հասարակության լիիրավ անդամներ և ապրում այնպես, ինչպես բոլոր մարդիկ:

Եզրակացություն

Այսօր շատ դպրոցներում ապահովում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառությունը: Երեխաները, անկախ հաշմանդամություն կամ սովորելու դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և վաղ սկիզբը տարրական դասարաններում լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար:

ԿԱՊԿՈՒ երեխանների կյանքում կարևոր է նրանց ճիշտ կրթություն տալը, այստեղ շատ է կարևորվում դպրոցի և ուսուցչի դերը: Ուսուցչից շատ բան է կախված՝ հոգեկան վիճակից մինչև նրա գիտելիքները: ԿԱՊԿՈՒ սովորողներին ուսումնական գործընթացում ընդգրկելու համար անհրաժեշտ է ծնողների և դպրոցի միասնական աշխատանքը, մշտական երկխոսությունը և շփումը, կարևոր է ուսուցիչներին զինել գիտելիքներով՝ ծնողների հետ աշխատելու և երեխաներին կրթական գործընթացում ընդգրկելու համար:

Շատ կարևոր են այն ուսումնական մեթոդները, որոնք օգտագործում է ուսուցիչը տարրական դասարաններում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելիս: Դասի ճիշտ պլանավորումը, հետաքրքիր ու հասկանալի մեթոդների կիրառումը հենց այն գործիքներն են, որոնց միջոցով ԿԱՊԿՈՒ աշակերտը հարմարվում է միջավայրին, շփվում է իր դասընկերների հետ և մասնակցում է դասապրոցեսին:

Յուրաքանչյուր դպրոցում ուսուցիչների համար կարևոր է քննարկում ունենալ ԿԱՊԿՈՒ երեխաների մասին, կիսվել փորձով և սովորել միմյանցից: Ուսուցիչներն ինչքան շատ ուսումնասիրեն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելու առանձնահատկությունները, այնքան նրանց համար հետագայում ավելի հեշտ կլինի ճիշտ և նպատակային կիրառել այդ գիտելիքները: Մանկավարժությունը ենթադրում է պատասխանատվության մեծ զգացում և սա կրկնապատկում է հատկապես այն դեպքում, երբ դու դասավանդում ես ԿԱՊԿՈՒ աշակերտի, այստեղ մանկավարժության հետ մեկտեղ պետք է կիրառելի լինի նաև հոգեբանությունը: ԿԱՊԿՈՒ մարդիկ հասարակության լիարժեք անդամներ են, նրանց հանդեպ տարբերակված մոտեցումը պետք է ի սպառ ոչնչացվի և հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է նրանց օգնի իրենց կյանքի ճանապարհին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Թադևոսյան Ս, Անհատական ուսուցման պլանի մշակման մեթոդական-ուղեցույց ձեռնարկ, 2016թ, 136 էջ

2. Մնացականյան Ն. Ս, Ներառական դասարաններում սովորող երեխաների հիմնախնդրի ըմբռնումը և լուծումը, ուղեցույց ուսուցիչների համար, Երևան, 2009թ, էջ 87.

3. Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017թ, 23էջ

4. Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020 թ, 21 էջ

Էլեկտրոնային նյութեր

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166

2. //www.moj.am/storage/uploads/00.Ardir_8.pdf